ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Սիրանուշ Մելիքյան

Բանալի բառեր՝ *եկեղեցի, պետություն, գործընթաց, վարչապետ, կաթողիկոս, աշխատանքային խումբ:*

Հայաստանի երրորդ հանրապետության գոյության ընթացքում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները բաժանում ենք տարբեր փուլերի՝ կապված նաև եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման, հանրային քննարկումների, մթնոլորտի ձևավորման հետ: Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների ընթացքն ու զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են՝ ներքաղաքական գործընթացներն ու միջազգային քաղաքական իրողությունները, հոգևոր դասի գործունեության ընթացքն և արդյունքները, ակտիվության կամ պասիվության ցուցիչը, եկեղեցու, հոգևոր ու ազգային արժեքների դեմ ծավալվող ընթացիկ շարժումները, ստեղծված իրավիճակը, միջազգային նմանատիպ գործընթացներն ու դրանց ազդեցությունը տարբեր երկրներում տեղի ունեցող իրադարձությունների վրա ինչպես նաև ստեղծված պատմական իրավիճակն ու գործընթացները:

Եկեղեցի-պետություն հարաբերությունների պետական քաղաքականության վերաբերյալ որևէ հայեցակարգ դժվար է գտնել, սակայն որոշակի եզրահանգումներ կարող ենք անել՝ վերլուծելով պետության պաշտոնյաների հրապարակային հայտարարությունները, եկեղեցու շուրջը ձևավորված սոցիալական հայեցակարգը, քննադատությունները, եկեղեցական կյանքի փոխակերպումները[1]:

Հանրային և պետական կյանքում եկեղեցու շուրջ ծավալված բոլոր քննարկումներում ու ստեղծված մթնոլորտում թվացել է, թե երբեք էլ կասկածի տակ չի կարող դրվել Հայ առաքելական եկեղեցու բացառիկ պատմական դերն ու ինքնության պահպանման գործում նրա ունեցած հսկայական ծառայությունը, սակայն Հայաստանի երրորդ հանրապետությունում ստեղծվեց պատմական մի այնպիսի իրավիճակ, որն անջրպետ առաջացրեց հասարակության, եկեղեցու, պետության ինստիտուտների միջև: Նշվածն ուղեկցվեց նաև տեղեկատվական դաշտում եկեղեցու դերի նվազեցմամբ՝ ծայրահեղ բացասական ինֆորմացիայով, մեկնաբանություններով ու տարաբնույթ ելույթներով, հրապարակումներով: Եկեղեցու շուրջ ստեղծված իրավիճակը հասկանալու համար անհրաժեշտ է վերլուծել, թե արդյոք իշխանության փոփոխության, հեղափոխության գործընթացների, խորհրդարանական կառավարման անցման համատեքստերում անհրաժեշտ էր փոխակերպել նաև եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայեցակարգն ու մոտեցումները՝ համապատասխանեցնելով ստեղծված իրավիճակին: Այսինքն՝ հիմնախնդրի լուծման ուղիներ առաջարկելուց առաջ նախ անհրաժեշտ

---

* Հոդվածն ընդունվել է 11.10.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 25. 10. 19:

էր հասկանալ այն հանգամանքները, որոնք դարձել էին եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների միջև անջրպետի առաջացման պատճառը:

Նախ նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում 2018թ. տեղի ունեցող հեղափոխական գործընթացներն ու հաջողությամբ ավարտված թավշյա հեղափոխությունն իր հերթին կտրուկ, շեշտակի փոփոխություններ մտցրեց երկրի ռազմավարության, ներքին ու արտաքին քաղաքականության, հասարակական հարաբերությունների մեջ: Իսկ վերևում արդեն խոսել ենք եկեղեցի-պետություն փոփոխվող հարաբերությունների հայեցակարգի մասին՝ կախված մի շարք իրողություններից, գործընթացներից ու տվյալ ժամանակահատվածից: Ընդհանրապես յուրաքանչյուր հասարակություն հեղափոխություններից հետո կանգնում է արժեքային ճգնաժամի առաջ՝ քանի որ հնի ու նորի անցումում է հայտնվում, որն էլ լի է բազմաթիվ հիմնահարցերով ու խնդիրներով: Պետության ինստիտուտի փոխակերպման, նոր կայացման փուլում ակտիվանում են ամենատարբեր շարժումներ, ակտորներ, ուժեր և մեծանում է միջազգային մի շարք միավորների ակտիվությունը երկրների ներսում: Հայաստանն էլ կարող ենք նշել, որ կանգնեց որոշակի արժեքային ճգնաժամի առջև, որի լուծման ուղիներն սկսեցին փնտրել պետական մակարդակով նախաձեռնությունը վերցնելու համար: Խոսքը վերաբերվում է Հայ առաքելական եկեղեցու շուրջն ստեղծված լարված իրավիճակին, երբ հասարակական որոշ ուժեր փորձեցին քաղաքական ռեֆորմները տեղափոխել հոգևոր ոլորտ ու բարեփոխումներ իրականացնել հոգևոր դաշտում: Ստեղծված իրավիճակը պետական մակարդակով վերահսկելու նպատակով ամենատարբեր ձևաչափերով հանդիպումներ տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ն.Ս.Օ.Տ.Տ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդի հետ: Առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2018թ. մայիսի 5-ին, հոգևոր ու պետական առաջնորդները միմյանց հետ քննարկել են եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին վերաբերվող մի շարք հարցեր[2]: Այս հանդիպմանը հաջորդեց հոգևոր ու պետական առաջնորդների հանդիպումն արդեն այլ ձևաչափով, 2018թ. հունիսի 1-ին ՀՀ վարչապետը հանդիպեց Գերագույն հոգևոր խորհրդի ու եպիսկոպոսաց դասի ներկայացուցիչների հետ՝ ամենայն հայոց կաթողիկոսի առաջնորդությամբ: Հանդիպման հիմնական գաղափարն այն էր, որ երկու ինստիտուտների՝ պետական և եկեղեցական, առաջնորդները, ղեկավարներն ու ներկայացուցիչները համատեղ ջանքեր ներդնեն առաջընթացի մեջ գտնվող, ուժեղ երկիր կառուցելու համար[3]: Այս շրջանում կարող ենք ենթադրել, որ փոխվեցին մոտեցումները եկեղեցու հիմնահարցերի շուրջ, ու եկեղեցու շուրջ ստեղծված խառնաշփոթ իրավիճակն աստիճանաբար սկսեց կայունանալ, երբ երկրի ղեկավարն անձամբ սկսեց ժամանակ հատկացնել և զբաղվել եկեղեցու հետ փոխհարաբերությունների կարգավորման հիմնախնդիրներով:

ՀՀ վարչապետի և Ամենայն հայոց կաթողիկոսի հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ 2018թ. նոյեմբերի 11-ին: Այս անգամ հանդիպումն ավելի կառուցողական քննարկումներով անցավ: Առաջնորդները քննարկեցին մի շարք կարևոր հարցեր: Պետությանը վերաբերվող հարցերի քննարկումից և վեհափառի խոսքից առանձնացնում ենք հետևյալ հատվածը. «Անշուշտ, գիտենք, որ երկրի առջև բազում մարտահրավերներ կան, և կարևոր իրադարձություններ նաև առջևում են՝ Ազգային ժողովի ընտրությունները: Մեր ցանկությունն է և մեր մաղթանքը, որ ընտրությունները խաղաղ ընթացք ունենան, ընթանան համերաշխ մթնոլորտում առանց անցանկալի միջադեպերի, նպաստեն մեր ժողովրդի, մեր երկրի բարի անվան և բարի հեղինակության բարձրացմանը, արդյունքներն էլ նպաստեն մեր երկրի առաջընթացին»[4]: Պետք է նշենք, որ Հայաստանը, այնուամենայնիվ լինելով աշխարհիկ երկիր, բայց միևնույն ժամանակ հագևոր առաջնորդը՝ անիմջականորեն չխառնվելով երկրի քաղաքական գործընթացներին, մեծ հետաքրքրություն է ցուցաբերում և իր տեսանկյունից մտահոգվում երկրի ներքաղաքական կայուն իրավիճակի և արտաքին հեղինակության մասին: Այսինքն՝ երկրի

քաղաքական կյանքի կայունությունը երկրի գլխավոր հոգևոր ինստիտուտի՝ Հայ առաքելական եկեղեցու համար կարևորագույն պայման է հանդիսանում: Միևնույն ժամանակ այստեղ կարևոր ենք համարում նաև, որ եկեղեցին, որպես հոգևոր առաջնորդության առանցքային և հիմնական կառույց, իրեն առանձնակի կարևորությունը պետք է հաստատեր հասարակության դեմ հոգեբանական պատերազմների չեզոքացման, ներդաշնակ սոցիալական մթնոլորտի ձևավորման տեսանկյունից: Իր հերթին կարևորելով եկեղեցու հեղինակության բարձրացումը սեփական հասարակության աչքին և երկրի միջազգային հեղինակության համար՝ << վարչապետն իր խոսքում շեշտեց. «Ինձ համար շատ կարևոր են այդ քննարկումները և ընդհանրապես իմ շփումը կամ Հայաստանի վարչապետի շփումը Հայ առաքելական եկեղեցու Հայրապետի հետ: Իհարկե, մեզ համար, մեր ժողովրդի, մեր երկրի համար Հայ առաքելական եկեղեցու արժեքներն ունեն ինքնության համար առանցքային նշանակություն: Այս ընկալումը մեզ միշտ էլ առաջնորդել է և շարունակում է առաջնորդել, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն առանձնակի նշանակություն ունի մեր ժողովրդի, Հայ առաքելական եկեղեցու յուրաքանչյուր հետևորդի, այդ թվում՝ իմ և իմ ընտանիքի կյանքում: Եվ ընդհանրապես ժամանակ առ ժամանակ պետք է լինել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Սա նաև անցյալի և ապագայի մասին խորհելու, մտածելու ամենահարմար վայրն է, խոստանում եմ, որ ընտրությունները խաղաղ, համերաշխ մթնոլորտում կանցնեն»[5]: << վարչապետի այս խոսքերը փաստացի վկայությունն են Հայ առաքելական եկեղեցու բացառիկ դերի ու կարգավիճակի ամրագրման ու հստակեցման՝ հատկապես եկեղեցու շուրջ ստեղծված արժեքային ճգնաժամի պայմաններում:

Եկեղեցական ու պետական առաջնորդների հաջորդ հանդիպումն արդեն Հայոց երկու կաթողիկոսների մասնակցությամբ էր՝ Գարեգին 2-րդի և Արամ 1ինի, 2019թ. փետրվարի 22-ին << վարչապետը հյուրընկալեց վերջիններիս: Հանդիպման քննարկման սեղանին համատեղ ուժերով երկրի ներքին ու արտաքին կյանքում առաջացած խնդիրների հաղթահարումն էր: << վարչապետը մի քանի անգամ շեշտեց, որ եկեղեցու հետ հարաբերությունները կարևոր է իր՝ որպես երկրի ղեկավարի և առաջնորդի համար: Իրենց հերթին հոգևոր առաջնորդները, մասնավորապես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց << վարչապետին, եկեղեցու դերի կարևորությունը մատնանշելու, շեշտելու համար թե՛ երկրի, թե՛ ժողովրդի կյանքում[6]:

Ըստ էության այս հանդիպումները, քննարկումները, հեռախոսազրույցները, համատեղ մի շարք պետական, եկեղեցական միջոցառումներին մասնակցությունը հետագայում պարարտ հող հանդիսացավ եկեղեցի-պետություն հարաբերությունները բոլորովին նոր հարթակի վրա դնելու և կառուցվածքային ձևաչափի մեջ տեղավորելու համար: Վերոգրյալի վկայությունն էր հաջորդ կարևոր իրադարձությունը: 2019թ. Մայիսի 3-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով ստեղծված աշխատանքային խմբի առաջին հանդիպում քննարկումը: Այս աշխատանքային խմբի ստեղծումն աննախադեպ քայլ էր << երրորդ հանրապետության պատմության մեջ՝ եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին առնչվող հարցերը դեմ առ դեմ, անմիջական քննարկելու ու լուծելու տեսանկյունից: Առանձին հանդիպումներ եղել են տարբեր ձևաչափերով, տարբեր ժամանակահատվածներում, սակայն որպես այդպիսին, այս քայլը թերևս նոր ավելի կենսունակ, գործնական մակարդակի վրա դրեց եկեղեցու շուրջ ստեղծված իրավիճակը կայունացնելու ու հարաբերությունները կագավորելու հիմնահարցը[7]:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով ստեղծված աշխատանքային խմբի ընդհանուր բնույթն ուսումնասիրելով՝ հասկացանք, որ այնտեղ ներառված են փոխնախարարներ, պետական տարբեր մարմինների ղեկավարների տեղակալներ, ոստիկանութ-

յան տարբեր ստորաբաժանումների պետեր, հոգևորականներ Մայր Աթոռի վարչական բաժիններում աշխատող տարբեր անհատներ: Խմբի ղեկավարը վարչապետի աշխատակազմի ղեկավարն է: Խմբի անդամ է փաստաբանների պալատի նախագահ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եվրախորհրդատվական խմբի անդամ Արա Զոհրաբյանը, ով նշում էր, որ խումբը նոր է, և ինքը պատրաստվում է պետության ներկայացուցիչների հետ միասին բարձրացնել և քննարկել բոլոր այն հարցերը, որոնք վնասում են Հայ առաքելական եկեղեցու հեղինակությանը: Վերջինս անկարելի է համարում ցանկացած քայլ, որն ուղղված է Հայ առաքելական եկեղեցու ինստիտուտին դեմ: Նույն աշխատանքային խմբի անդամ ՀՀ Մշակույթի փոխնախարար Տիգրան Գալստյանն իր խոսքի մեջ ևս կարևորեց այս աշխատանքային խմբի ձևավորման հասունացած անհրաժեշտությունը, վերջինս գտնում է, որ եկեղեցին և պետությունը պետք է ունենան կառուցողական հարաբերություններ: Փոխնախարարն իր մասով նշեց, որ մշակույթի նախարարության և Հայ առաքելական եկեղեցու սերտ առնչությունն ու համագործակցությունը խիստ կարևոր է ազգային մշակութային արժեքների պահպանման, ներկայացման տեսանկյունից: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քահանա Մելիքյանը շեշտում է, որ այս խմբի ստեղծումը լուրջ առաջխաղացում է եկեղեցի-պետություն փոխհարաբերություններում՝ նոր ձևաչափով եկեղեցու առջև ծառացած խնդիրները համատեղ ուժերով հարթելու ու պետությունն ավելի հզորացնելու համար:

Աշխատանքային խմբի առաջին հանդիպման ժամանակ ՀՀ վարչապետը նշեց. որ «Վեհափառ Հայրապետի հետ քննարկումների արդյունքում մենք եկանք այն եզրակացության, որ անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով զբաղվելու համար, որպեսզի ունենանք մշտական գործող աշխատանքային ձևաչափ և գոյացող հարցերը քննարկվեն և լուծումներ ստանան: Ընդ որում, այդ լուծումները ցանկալի է, որ լինեն ոչ թե հատվածական և այսրոպեական, այլ ընդհանրապես ինստիտուցիոնալ և երկարաժամկետ: Այս առումով, կարծում եմ, որ չափազանց կարևոր է, որ այս քննարկումների համատեքստում համադրենք եկեղեցի-պետություն հարաբերությունների մեր պատկերացումները այն նոր իրավիճակի համատեքստում, որ այսօր գոյություն ունի Հայաստանի Հանրապետությունում: Իհարկե, կարիք չկա ասելու, թե մեզ համար ինչպիսի մեծ կարևորություն և դերակատարում ունի Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին: Արձանագրելով, որ պայմանավորվում ենք անկաշկանդ բոլոր հարցերը քննարկել փաստարկների դաշտում՝ դարձյալ ուզում եմ ընդգծել, որ ինձ համար կարևոր է ոչ միայն Հայ Առաքելական Եկեղեցու դերակատարումը Հայաստանի Հանրապետությունում և ընդհանրապես հայության շրջանում, այլև ինձ համար շատ կարևոր է Հայաստանի Հանրապետությունում քրիստոնեական արժեքների արմատավորումը: Եվ ես կհամարձակվեմ ասել, որ Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունը մեծ մասով հիմնված էր հենց քրիստոնեական արժեքների վրա:

Ես սա ասում եմ՝ արձանագրելու համար իմ վերաբերմունքը եկեղեցուն, իմ վերաբերմունքը քրիստոնեությանը, իմ վերաբերմունքը քրիստոնեական արժեքներին: Եվ ես համոզված եմ, որ այդ քրիստոնեական արժեքները կարող են ծառայել և պիտի ծառայեն Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի հզորացմանը»[8]: Թե ինչքան կարևոր ենթակետեր ու ցուցումներ կար ՀՀ վարչապետի այս խոսքի մեջ, մենք սրան կանդրադառնանք քիչ հետ: Այնուհետև շեշտենք այն կարևոր խնդիրները եկեղեցի-պետություն փոխհարաբերություններում առաջացած, որոնց անդրադարձավ ՀՀ վարչապետը. խոսքը կրթության, հարկային հարաբերությունների, իր հերթին ամենայն հայոց կաթողիկոսը նշել է, որ «Հայրենի պետության և մեր Եկեղեցու հարաբերությունների կանոնակարգման այս նոր ձևաչափը բարեպատեհ հնարավորություն է՝ քննարկելու

փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերը և փնտրելու դրանց լուծման ուղիներ՝ ի խնդիր մեր Եկեղեցու առաքելության արդյունավորման՝ հանուն մեր երկրի և ժողովրդի»:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով հայաստանյան ներկա իրողությունների ֆոնի ներքո եկեղեցի-պետություն հարաբերությունների շուրջ ստեղծված հանրային, միջազգային և տարածաշրջանային իրավիճակը, հասարակական ճնշումները, փոխհարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերը, կատարել ենք մի շարք կարևոր դիտարկումներ և հանգել ենք մի շարք եզրակացությունների.

- *Ցանկացած երկում հեղափոխական իրավիճակներն ու հեղափոխություններն առաջ են բերում ճգնաժամեր, որի լուծումը հետագայում կախված է ճիշտ որոշումներից, ընկալումներից, գործողություններից: Հայ առաքելական եկեղեցու շուրջ նմանատիպ մի ճգնաժամային իրավիճակ առաջացավ, երբ եկեղեցին սկսվեց քննարկվել և քննադատվել ներքաղաքական և արտաքին քաղաքական ամենատարբեր մակարդակներում, ինչն էլ սկսեց ազդել եկեղեցու հեղինակության կտրուկ իջեցման վրա: Հայ Առաքելակա եկեղեցու շուրջ ստեղծված անվստահության մթնոլորտը նոր փուլի մեջ մտավ՝ դառնալով նաև ազգային, հոգևոր-մշակութային անվտանգության լրջագույն խնդիր՝ կված եկեղեցու ինստիտուտի, դրքերի խարխլման հետ:*
- *ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, գիտակցելով ստեղված իրավիճակը գնաց որոշակի քայլերի, մասնավորապես հաճախակի դարձան հանդիպումներն ու քննարկումները հայ առաքելական եկեղեցու առաջնորդ Գարեգին Երկրորդի հետ:*
- *Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով ստեղծված աշխատանքային խմբի համալրումը համապատասխան մասնագիտացված անձերով ավելի գործնական լուծումների կհանգեցնի եկեղեցի-պետություն փոխհարաբերություններում ժամանակ առ ժամանակ առաջացող հիմնահարցերը[9]:*
- *ՀՀ վարչապետի և Հայոց կաթողիկոսի պարբերաբար հանդիպումներից, վարչապետի հաճախակի ելույթներից հետո, որն ունենում էր եկեղեցու մասին, զգալիորեն նվազեց եկեղեցու շուրջ ստեղծված լարված մթնոլորտը, ինչը կարող ենք պայմանավորել նաև ՀՀ վարչապետի ունեցած լեգիտիմության բարձր ցուցանիշով, որով էլ պայմանավորված էր իրավիճակի կարգավորումը, ուստի հաճախակի դրական ելույթները եկեղեցու հասցեին ունեցան իրենց դրական և կայունացնող նշանակությունը:*
- *Բոլորովին նոր ձևաչափ էր Հայաստանի Հանրապետության և Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունները կարգավորող աշխատանքային խմբի ստեղծումը՝ ՀՀ վարչապետի 2019թ. հունվարի հրամանով, հետաքրքիր էր այնքանով, որ եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորումը դրվում էր եկեղեցական ու պետական իշխանության ներկայացուցիչների քննարկման սեղանին, որն էլ հետագայում պետք է լուրջ հիմք հանդիսանար մի շարք ծրագրերի, գործողությունների իրականացման համար:*
- *Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները դրվեց բոլորովին նոր՝ պետաեկեղեցական հարաբերությունների ձևավորման մշակույթի վրա, որն էլ կարող էր հիմք հանդիսանալ այլ երկրներում նմանատիպ կարգավորման ձևաչափ ստեղծելու համար:*
- *Աշխատանքային խմբի առաջին հանդիպման ժամանակ ՀՀ վարչապետի խոսքից պարզ էր դառնում, որ պետությունը պատրաստ է կառուցողական վերաբերմունք ցուցաբերել ցանկացած հիմնահարցի, ցանկացած խնդրի լուծման համար, եթե այն փաստացի գոյացել է պետաեկեղեցական հարաբերություններում:*

- *Աշխատանքային խմբի ստեղծման այս ձևաչափը կարևոր էր նաև այն տեսանակյունից, որ այն իրավական հիմքով (ՀՀ վարչապետի հրամանով) ստեղծված կառուցողական երկխոսության հարթակ էր, որը հնարավորություն կտար բարձրացնելու ցանկացած հստակ հարց, խնդիր, և հանգելու եզրակացության կամ գտնելու լուծումը:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Հայաստանյայաց առաքելական եկեղեցու հանրային դիսկուրսը», Ստեփան Դանիելյան, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի նախագահ», https://religions.am/article/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%b5%d5%a1%d5%b5%d6%81-%d5%a1%d5%bc%d5%a1%d6%84%d5%a5%d5%ac%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8%d6%82-%d5%b0%d5%a1/
2. Նիկոլ Փաշինյանը հյուրընկալել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին https://www.primeminister.am/hy/press-release/item/2018/05/24/Prime-Minister-met-with-Catholicos/
3. Նիկոլ Փաշինյանը հանդիպել է գերագույն խորհրդի և եպիսկոպոսաց դասի տարեկան ժողովի մասնակիցներին https://www.primeminister.am/hy/press-release/item/2018/06/01/Prime-Minister-Nikol-Pashinyan-had-a-meeting-with-participants-of-the-Supreme-Spiritual-Council-and-Bishops-Assembly/
4. Նիկոլ Փաշինյանը հանդիպել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ https://www.primeminister.am/hy/press-release/item/2018/11/14/Nikol-Pashinyan-met-with-Garegin-II/
5. Նույն տեղում
6. Վարչապետը հյուրընկալել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ և Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսներին: https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/02/22/Nikol-Pashinyan-meeting-Katolikus/
7. Տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով աշխատանքային խմբի առաջին հանդիպումը https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/05/03/Nikol-Pashinyan-meeting/
8. Տե՛ս, նույն տեղում https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/05/03/Nikol-Pashinyan-meeting/
9. «Եկեղեցի-պետություն հարաբերությունները Հայաստանում», Երվանդ Ազատյան, «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ, 7հունիսի 2019:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների վերանայման արդի հիմնախնդիրները պետական կառավարման ապարատի փոխակերպման և խորհրդարանական կառավարման անցման համատեքստում

Սիրանուշ Մելիքյան

Հայաստանյան արդի իրողությունների ֆոնի ներքո եկեղեցի-պետություն հարաբերությունների շուրջ ստեղծված իրավիճակն անընդհատ քննարկվում է հասարակաքաղաքական, փորձագիտական տարբեր շրջանակներում, ուստի քաղաքագիտական տեսանկյունից իրադարձությունների ու գործընթացների վերլուծությունը կարևոր է եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների զարգացման ներկա իրողություններն ըմբռնելու ու գործընթացները վերլուծելու առումով: Հայաստանի Երրորդ Հանրապետության գոյության ընթացքում, եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները բաժանում ենք տարբեր փուլերի՝ կապված նաև եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման, հանրային դիսկուրսի, մթնոլորտի ձևավորման հետ: Ուստի այդ փուլերի ուսումնասիրությունը կարևորագույն գիտական խնդիր է մի շարք իրողությունների ընկալման տեսանկյունից:

РЕЗЮМЕ

Актуальные вопросы пересмотра церковно-государственных отношений в контексте преобразования аппарата государственного управления и перехода к парламентскому управлению

Сирануш Меликян

Ключевые слова: церковь, государство, процесс, премьер, католикос, рабочая группа

Современное состояние церковно-государственных отношений в контексте современных армянских реалий постоянно обсуждается в различных общественно-политических, экспертных кругах, поэтому анализ событий и процессов с политической точки зрения важен с точки зрения понимания современных реалий развития церковно-государственных отношений и анализа процессов. За время существования Третьей Республики Армения церковно-государственные отношения делятся на разные фазы, в том числе правовое регулирование церковно-государственных отношений, публичный дискурс, формирование атмосферы. Поэтому изучение этих этапов является важной научной проблемой с точки зрения понимания ряда реалий.

SUMMARY

Current Issues in Revising Church-State Relations in the Context of Transforming Public Administration Apparatus and Transition to Parliamentary Governance

Siranush Melikyan

Keywords: church, state, process, prime minister, Catholicos (Patriarch), working group.

The current state of church-state relations in the context of modern Armenian realities is constantly being discussed in various socio-political, expert frameworks, thus analyzing events and processes in the context of policy is considered necessary for understanding the current realities of church-state relationship, development and analyzing processes. During the existence of the Third Republic of Armenia, church-state relations have been divided into different phases, including the legal regulation of church-state relations, public discourse and the formation of the atmosphere. Therefore, the research of these stages is an important scientific issue in terms of understanding a number of realities.